ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

11 մարտի 2020թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամները և տնօրենի պաշտոնակատար պ-ն Ա.Մակարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշվետվություն կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի մասին:
2. 2019-20 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների ժամանակացույցի քննարկում:
3. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման աշխատանքների քննարկում:

/զեկ. Մ.Ա.Զաքարյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ.Զաքարյանը:

1. ԼՍԵՑԻՆ- **Հաշվետվություն կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի մասին:**

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ.Զաքարյանը: Նա ներկայացրեց Ի/ԿՄ կրթական ծրագրով ինֆորմատիկա և քարտեզագրություն և Կ/Գ կրթական ծրագրով աշխարհագրություն մասնագիտությունների ուսանողները կուրսային և

ավարտական աշխատանքները կատարում են բարեխղճորեն, համագործակցում են ղեկավարների հետ:

2. ԼՍԵՑԻՆ - 2019-20 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների ժամանակացույցի քննարկում:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը ներկայացրեց 2019-20 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների ժամանակացույցը: Դեմ չկար:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու Նախապաշտպանությունների ժամանակացույցը:

3.ԼՍԵՑԻՆ- Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման աշխատանքների քննարկում:

Օրակարգի երրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ կազմված է I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը, որը նախապես համաձայնեցվել է դասախոսների և ուսանողների հետ: Դասավանդող բոլոր դասախոսները պարտադիր իրենք են անցկացնելու քննությունները, որոնք կանցկացվեն տեսախցիկներով լսարաններում: Դեմ չկար:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

ՆԱԽԱԳԱՀ *Մ.Ա.ԶԱՔԱՐՅԱՆ*

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ